http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

.... 2016 թվականի N ..... -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 123-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 14-րդ հոդվածի 3-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Աուդիտորների որակավորման հետ կապված հարցերը կանոնակարգելու մասին հաստատելու մասին» N 123-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) Որոշման վերնագրից հանել «հաստատելու մասին» բառերը,

2) Որոշման 1.4-րդ կետի «ա» ենթակետը «5 աշխատանքային օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝ «Աուդիտորի որակավորման վկայական ունեցող աուդիտորին նոր վկայական տրամադրելու դեպքում գործող վկայականը համարվում է ուժը կորցրած»:

2. Սահմանել, որ լիազորված մարմնի կողմից կազմակերպված քննությունների արդյունքում որակավորված աուդիտորների որակավորման վկայականի ժամկետը երկարաձգվում է մինչև 2019 թվականի փետրվարի 1-ը ներառյալ:

Սույն կետով սահմանված աուդիտորի որակավորման վկայականի ժամկետի երկարաձգման վերաբերյալ նշագրում կատարելու նպատակով աուդիտորը կարող է դիմել լիազորված մարմնին՝ ներկայացնելով վկայականի բնօրինակը:

http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

4. Սույն որոշման 2-րդ կետի գործողությունը տարածվում է 2016 թվականի փետրվարի 1-ի դրությամբ գործող աուդիտորի որակավորման վկայականների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 123-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	
1.	Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը
	Ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից անցկացված քննությունների արդյունքում որակավորում ունեցող, տարբեր աուդիտորական կազմակերպություններում լիցենզիայի պահանջներ ապահովող, աշխատող աուդիտորների վկայականների գործողությունը ժամկետը լրանալու հիմքով պետք է դադարեցվի, որի արդյունքում կդադարեցվեն նաև մի շարք աուդիտորական կազմակերպությունների լիցենզիաների գործողությունները, եթե այլ բան չնախատեսվի օրենսդրությամբ: Ստեղծված իրավիճակում մասնագիտացված կառույցի քննությունները հաղթահարելու երկարաժամկետ հեռանկարին որպես այլընտրանք նախագծով առաջարկվում է գործող աուդիտորների որակավորման վկայականների գործողության ժամկետի երկարաձգումը 3 տարի ժամկետով, ևս մեկ անգամ հնարավորություն տալով փորձառու աուդիտորներին մասնագիտացված կառույցի կողմից առաջարկվող ծրագրին համապատասխան որակավորման քննություններ հանձնելու համար:
2.	Առաջարկվող կարգավորման բնույթը
	Նախագծի նպատակը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախկինում կազմակերպված քննությունների արդյունքում որակավորված աուդիտորների որակավորման վկայականների գործողության ժամկետի կարգավորումն է՝ երկարաձգելով դրանք 3 տարի ժամկետով:
3.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք և նրանց դիրքորոշումը
	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի հաշվապահության և աուդիտի մեթոդաբանության բաժին:

4.	Ակնկալվող արդյունքը
	Աուդիտորական գործունեության ոլորտում նախկինում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված քննությունների արդյունքում որակավորված աուդիտորների որակավորման վկայականների գործողության ժամկետի հարցի կարգավորում:

http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 123-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 123-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունել անհրաժեշտ չէ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 123-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 123-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

Ց Ա Ն Կ

ԱՅՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ՈՐՈՆՑ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՄ ՈՐՈՆՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՎ ՄՇԱԿՎԵԼ Է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 123-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

1. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք,

2. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք,

3. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք,

4. ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Աուդիտորների որակավորման հետ կապված հարցերը կանոնակարգելու մասին հաստատելու մասին» N 123-Ն որոշում:

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 123-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ (ՄՇԱԿՈՂՆԵՐԻ)

1.Կարեն Ալավերդյան	-	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հաշվապահության և աուդիտի մեթոդաբանության բաժնի պետ
2. Նաիրա Խուդինյան	-	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հաշվապահության և աուդիտի մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ
3. Լիլիթ Մարտիրոսյան	-	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հաշվապահության և աուդիտի մեթոդաբանության բաժնի առաջատար մասնագետ

http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 123-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմինների կարծիքների ու դրանց քննարկման արդյունքների մասին

Հ/Հ	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4
1.	*ՀՀ արդարադատության նախարարություն* *(23.12.2015 թ. թիվ 01/14/15933-15 գրություն)*	Նախագծի 2-րդ կետով նախատեսված է, որ որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից: Տվյալ դեպքում անհրաժեշտ է վերանայել որոշման ուժի մեջ մտնելու ժամկետը՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների ընդունման ընթացակարգը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է, խմբագրվել է:
2.	*ՀՀ էկոնոմիկայի նախարարություն* *(12.01.2016 թ. թիվ 01/10.2.1/52-16 գրություն)*	Ներկայացրել են, որ առաջարկություններ և առարկություններ չունեն:	

3.	*ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն* *(14.01.2016 թ. թիվ 01/66-16 գրություն)*	Ներկայացրել են, որ առաջարկություններ և դիտողություններ չունեն:	
4.	*ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ* *(18.01.2016 թ. թիվ 37/37.2/531-16 գրություն)*	1. Հաշվի առնելով, որ ներկայումս «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն աուդիտորի որակավորման վկայականը տրվում է ՀՀ կառավարության սահմանած ժամկետով, որը սակայն չի կարող պակաս լինել 5 տարուց և լրացուցիչ այլ պահանջներ սահմանված չեն, առաջարկում ենք շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներին մասնակցության պարտադիր պահանջ սահմանել 5 տարվա ընթացքում մեկ անգամ: Սա հնարավորություն կտա որակավորման վկայականը անժամկետ դարձնելուն զուգահեռ ձեռնպահ մնալ որակավորված աուդիտորների համար դասընթացների մասնակցելու հետ կապված լրացուցիչ ծախսեր պարտադրելուց:	Նախագծում շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ՝ ՇՄԶ) համակարգի ներդրման, ինչպես նաև այդ դասընթացների տևողությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար 40 ժամից ոչ պակաս սահմանելու հանգամանքը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ և առաջ, <<Եվրասիական տնտեսական միության տարածքում աուդիտորական գործունեության մասին համաձայնագրի>> նախագծի համաձայն յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է ապահովել աուդիտոր ների կողմից շարունակական մասնագիտական վերապատրաստում անցնելու գործընթաց: Վերոնշյալ համաձայնագրի նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն աուդիտորների վերապատրաստման համար դասընթացների նվազագույն ժամաքանակը պետք է սահմանվի անդամ պետության կողմից և երկու հաջորդական տարվա համար չի կարող պակաս լինել 80 ժամից: Բացի այդ, աուդիտորների շարունակական վերապատրաստում անցնելու պարտադիր պահանջ է սահմանում նաև Եվրոպական Պառլամենտի և Խորհդի 2006 թվականի մայիսի 17–ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի մասին 2006/43/ԵՀ հրահանգը:

			Միաժամանակ, Հաշվապահների միջազգային դաշնության կողմից սահմանված կրթական ստանդարտների համաձայն՝ (International Education Standard 7) ոլորտի մասնագետները իրենց շարունակական մասնագիտական զարգացումը ապահովելու համար պարտավոր են երեք հաջորդական տարիների համար անցնել նվազագույնը 120 ժամ վերապատրաստման դասընթաց, որից 20 ժամը առնվազն յուրաքանչյուր տարվա համար: Մյուս կողմից, Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի (այսուհետ՝ ՀՀԱԱ) խորհրդի կողմից հաստատված՝ ՀՀԱԱ հասարակական կազմակերպության անդամների շարունակական մասնագիտական զարգացման գործառույթների կարգի 4-րդ կետի համաձայն՝ ՀՀԱԱ-ին անդամագրվելուց սկսած յուրաքանչյուր օրացուցային տարվա համար ՀՀԱԱ-ի անդամը պետք է առնվազն 40 ժամ մասնակցի շարունակական մասնագիտական զարգացման միջոցառումներին: Այս պարագայում անհրաժեշտ և հիմնավորված է նաև, որ Լիազորված մարմնի կողմից կազմակերպվող դասընթացները նույնպես ընդգրկեն առնվազն 40 ժամ:

		2. Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետով լրացվող 1.6. կետով սահմանվում են միայն լիազոր մարմնի կողմից կազմակերպված քննությունների արդյունքում որակավորված անձանց Վկայականների հետ կապված իրավահարաբերությունները: Առաջարկում ենք Նախագծով կարգավորել նաև մասնագիտացված կառույցի կողմից կազմակերպված քննությունների արդյունքում տրամադրված վկայականների անժամկետ դարձնելու գործընթացը:	Ընդունվել է, խմբագրվել է:
		3. Առաջարկում ենք Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետով լրացվող 1.6. կետով սահմանել դիմումի ձև և աուդիտորի անձնագրի և որակավորման վկայականի պատճենները հանել լիազոր մարմնի կողմից պահանջվող փաստաթղթերի ցանկից՝ փոխարենը դիմումի ձևում նախատեսելով անձնագրի և վկայականի համարները լրացնելու հնարավորություն:	Ընդունվել է, խմբագրվել է:

	ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչություն	1. Որոշման նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետով առաջարկվող լրացումները, որոնցով նախատեսվում է սահմանել շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներին մասնակցելու պարտականություն, ինչպես նաև վերոնշյալ դասընթաց անցնելու վերաբերյալ հավաստագրի կամ տեղեկանքի պատճենը լիազորված մարմնին չներկայացնելու դեպքում «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կամ «բ» կետերով սահմանված պահանջները ապահովելու իրավունքի սահմանափակում, հակասում են՝ 1) 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության (այսուհետ՝ ՀՀ Սահմանադրություն) 39-րդ հոդվածին՝ համաձայն որի մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին, ոչ ոք չի կարող կրել **պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով**, 2) ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին՝ համաձայն որի հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակելիս **օրենքները** պետք է լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք ներկայացնել վերոնշյալ լրացումների օրենսդրական հիմքը:	Ընդունվել է, խմբագրվել է:

		2. որոշման Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետով լրացվող 1.5-րդ կետի «ա» ենթակետի ձևակերպումից անհասկանալի և լիազորված մարմինը, և մասնագիտացված կառույցը կազմակերպելու են շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներ թե ոչ և արդյոք աուդիտորն ինքն է որոշելու որին մասնակցել:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է:
		3. որոշման Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետով լրացվող 1.5-րդ կետի «բ» ենթակետում նշված է դասընթացի տևողության միայն **նվազագույն** շեմ, ուստի հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածը և աուդիտորների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, ինչպես նաև հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով՝ անհրաժեշտ է սահմանել նաև **առավելագույն** շեմ:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է:
		4. որոշման Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետով լրացվող 1.5-րդ կետով կարգավորված չեն դասընթաց անցնելու վերաբերյալ հավաստագրի կամ տեղեկանքի տրման հետ կապված հարաբերությունները:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է:

		5. որոշման Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետով լրացվող 1.6-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածին՝ համաձայն որի բոլորը հավասար են օրենքի առջև, մինչդեռ 1.6-րդ կետով նախատեսվում է անժամկետ վկայական տալ **միայն լիազորված մարմնի կողմից** կազմակերպված քննությունների արդյունքում որակավորված և **միայն** վկայականի ժամկետը լրանալու օրվա դրությամբ **վերջին երեք տարում առնվազն մեկ տարի Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած որևէ աուդիտորական կազմակերպությունում որպես աուդիտոր աշխատած** անձանց:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է:
		6. որոշման նախագծի 4-րդ կետի համաձայն 1.6-րդ կետի գործողությունը տարածվում է 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործող վկայականների վրա: Վերոնշյալ սահմանափակումն իրավական հիմնավորման կարիք ունի:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է:
		7.նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:	Ընդունվել է, նախագիծը խմբագրվել է: